ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «21» հոկտեմբերի 2019թ.

2019թ-ի հոկտեմբերի 8-21, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև ՀԱԱՀ հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Լ. Մնացականյան	ՀԱԱՀ հիմնադրամի աշխատակազմի ղեկավար,
Ա. Հակոբյան	ՀԱԱՀ հիմնադրամի տպարանի վարիչ,
Մ. Բրոյան	ՀԱԱՀ հիմնադրամի ուսումնական գործընթացի կառավարման վարչության ուսումնամեթոդական բաժնի վարիչ,
Վ. Ենգիբարյան	ՀԱԱՀ հիմնադրամի տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժնի վարիչ,
Վ. Դանիելյան	ՀԱԱՀ հիմնադրամի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի կառավարման բաժնի վարիչ,

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Ե. Հարությունյանը՝ ՀԱԱՀ հիմնադրամի գնումների բաժնի մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Մնացականյանը, իսկ քարտուղարն էր՝ Ե. Հարությունյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Տպագրական ծառայություններ	2285180

ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացումը www.armeps.am կայքի միջոցով նախատեսված էր հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հոկտեմբերի 8-ին, ժամը «16:00»-ին, սակայն հանձնաժողովն արձանագրեց, որ հանձնաժողովի բացող անդամների մոտ հայտերի բացման վերաբերյալ առաջադրանքներ առկա չեն, իսկ ընթացակարգի կարգավիճակը շարունակում է մնալ «Հայտերի ներկայացում»:

Որոշվեց՝

1. Դիմել լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, պարզաբանումներ ստանալու համար
2. Նիստը կասեցնել մինչև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջացած խնդրի լուծումը, կամ լուծման անհնարինության դեպքում այդ մասին տեղեկատվության տրամադրման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջարկվել է գործընթացը շարունակել թղթային տարբերակով՝ հաշվի առնելով, որ ընթացակարգի մասնակիցների հայտերի փաթեթները տեսանելի են armeps համակարգի հայտերի հրապարակայնացման «Հայտեր» բաժնում և արդյունքում կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	«Մռավ Պրինտ» ՍՊԸ	Նար Դոս 1 նրբ. Տուն 16	armana6@mail.ru
2	Աննա Սահակյան Ա/Ձ	ք. Երևան, Ֆանարջյան 37	atsgnumner@gmail.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-19/51 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան., բացառությամբ «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի, բացակայում է հայտում առկա փաստաթղթերը ստորագրողի ստորագրելու լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթը և Աննա Սահակյան Ա/Ձ-ի՝ հայտով ներկայացված չէ հրավերի 4.1 հավելվածով նախատեսված ցանկը:
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ բացառությամբ «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի, բացակայում է հայտում առկա փաստաթղթերը ստորագրողի ստորագրելու լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթը և Աննա Սահակյան Ա/Ձ-ի՝ հայտով ներկայացված չէ հրավերի 4.1 հավելվածով նախատեսված ցանկը:
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին՝ բացառությամբ «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի, բացակայում է հայտում առկա փաստաթղթերը ստորագրողի ստորագրելու լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթը և Աննա Սահակյան Ա/Ձ-ի՝ հայտով ներկայացված չէ հրավերի 4.1 հավելվածով նախատեսված ցանկը:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	1	Աննա Սահակյան Ա/Ձ	2220000	2220000
	-	«Մռավ Պրինտ» ՍՊԸ	2888000	3465600

Որոշվեց՝

1. Լ. Մնացականյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

3. Քարտուղարին՝ ծանուցել մասնակիցներին առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասպանությունները:

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1. Աննա Սահակյան Ա/Ձ-ի կողմից սահմանված կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները և վերջինիս հայտը որոշվեց գնահատել բավարար:

2. «Մռավ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները և վերջինիս հայտը որոշվեց գնահատել անբավարար և մերժել:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել Աննա Սահակյան Ա/Ձ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 16:00-ին ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Մնացականյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Հակոբյան _____

Մ. Բրոյան _____

Վ. Ենգիբարյան _____

Վ. Դանիելյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ե. Հարությունյան _____